ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«23» «մայիս» 2023 թ. № 179-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 275-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի N 697-Ն որոշումը, քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2023 թվականի մայիսի 3-ի N 42/43.3/14823 գրությունը"

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 275-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի «փորձնակներ» բառից հետո ավելացնել «,փորձագետ» բառը,

2) հավելվածի 43-րդ կետի 4-րդ և 7-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

3) հավելվածը լրացնել նոր 43.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ"

«43.1 Նախարարության քաղաքացիական աշխատանք կատարողները և տեխնիկական սպասարկում իրականացնողները պարտավոր են.

1) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ պահպանել հանգստություն, բարեկրթություն,

2) Աշխատողների հետ հարաբերություններում ցուցաբերել հարգանք և բարեկրթություն՝ թույլ չտալով այնպիսի վարքագիծ, որը վնասում է անհատի արժանապատվությունն ու իրավունքները կամ ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը խոչընդոտում է ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետությանը:»,

4) հավելվածի 47-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

5) հավելվածը լրացնել նոր 47.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ"

«47.1 Նախարարության քաղաքացիական աշխատանք կատարողները և տեխնիկական սպասարկում իրականացնողներն աշխատանքային կարգապահության պահպանման մասով պարտավոր են"

1) իրենց աշխատաժամանակը չօգտագործել իրենց պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իրենց վերադասի կամ անմիջական ղեկավարի հետ,

2) արդյունավետորեն և խնայողաբար օգտագործել հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ծառայողական գույքը, ինչպես նաև չօգտագործել դրանք սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:»:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/23/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«23» մայիսի 2023թ.
ք.Երևան